

Եայ որ աւելի տաք ջրով լուաս . թէ որ առանց զգուշութեան տաք ջուրի մէջ ոտքերդ խոթես , պաղած արիւնդ կը սառի , երակներդ ու չնչերակներդ կը վիրաւորուին և վտանգի մէջ կ'ինաս բոլոր կեանքդ հաշմանդամ անցընելու :

Դ . կանոնադրել զիշերուան հանգիւար :

Երբոր զգեստներդ կը հանես որ պիտի պառկիս , ոտքդ ուժով ուժով գետինը զարկ , ու մի զաղբիր մինչև լաւ տաքութիւն մը զգաս :

Ի՞նկողին մանելուն պէս պէտք է հանդարտիլ , ու մէկդի ձգել այնպիսի մտածութիւն որ քնոյն արգելք կ'ըլլայ :

Չախ կամ աջ կողմիդ վրայ պառկէ , ծունկերդ քիչ մը ծալէ , ու այնպէս քնացիր . ամէն անգամոր կ'արթըննաս՝ անկողնիդ մէջ երկնցիր , որպէս զի արթըննան ոգիք , և արեան շարժումը աւելի ազատ ըլլայ :

Քնոյ ատեն ըլլայ որ երեսդ կամ զգուխոդ գոցես , վասն զի այնպէտով շընչ առութիւնը ոչ ազատ և ոչ ալ լաւ կ'ըլլայ . նայէ որ բերանդ գոց պառկիս :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Ք

Արևական վերջին խնդիրն ու պատերազմը ¹ :

1854 — ՍԵՊՏԵՄԲԵՐ

20 . Ալմայի պատերազմը . Անդղոյ ու Գաղփոյ զգեստները Սէնդ-Առնոյ մարածախանին հրամանատարութեն տակ Ալմայի բարձրութեանց վրայի Ռուսաց բանակին կը տիրեն . 50,000 ռուսկ Սէնչ ըլքով իշխանին հրամանատարութեն տակ գէպ ի Սեւաստոպուլ կը քաշուին : Դաշնակիցք 2,700 հոդի կը կորունցին . (1,200 Գաղզ . և 1,500 Անդշ .) : Ռուսաց կորուստը մինչև 5-6,000ի կ'ելլէ :

Ռուսաց վերջին զօրքերը բրութեն անդին կ'անցնին : Դանուբեան իշխանութիւնները Ռուսաց զօրքերէն բոլորովին կը պարպուին : (Տ . 2 Յուլիս 1853) :

21 . Բրուսիոյ պաշտօնատեարց ժողովոյն նախագահին գրած Աւստրիոյ ամսոյն 14ին շրջաբերականին պատասխանը . — Քանի որ Աւստրիական զօրաց Դանուբեան գաւառներուն մէջ մտնելը՝ այս երկիրներուս մէջ օտարաց հաստատուիլ կ'արգելու , Բրուսիա բոլորովին համամիտ է Աւստրիոյ Դանուբին վայ Գերմանական շահուն համար ունեցած մտածութեանցը : Բայց կը կարծէ որ եթէ Աւստրիոյ այս երկիրներս մանելը չկարենայ արգիլէլ որ երկու պատերազմով կողմերը իրենց պատերազմական շարժմանցը տեղի ընեն այն երկիրները , այն ատեն Ռուսիոյ և Աւստրիոյ զօրաց մէջ թշնամութեանց առիթները աւելի կը շատնան : Անոր համար պէտք է որ այս տեղական շահուն քուլ զորն որ պաշտպանելու կոչուած է Աւստրիա , աղեկ չափուի նաև հասարակաց շահը որն

որ կը յորդորէ որ Եւրոպական պատերազմը բացուելու վտանգներէն ետ կեցուի :

23 . Ռուսները իրենց նաւատորմզին մէկ մասը կ'ընկղմեն որպէս զի Սեւաստոպոլի նաւահանգըն տիրանը գոցուի :

Դաշնակցաց գորգը Քաջայէն կ'անցնին . 24ին ալ Պէլակէէն . 25ին Սեւաստոպոլին արեելեան կողմէն պտոյս մը ընելով . 26ին Պալաբլաւա քաղքին ու նաւահանգուտին կը տիրէն :

Սդիրակէյ յայտարարութիւնը մը կը հանէ , իմացնելով որ Վալաքիոյ կառավարութեան վարչութիւններէն նորէն ձեռք կ'առնու : Աւստրիոյ մեծ մարտախան հէս պարոնը Պուգրէշդ կը մտնէ :

29 . Տէրովիշ փաշային Մոլուախոյ բնակչաց որևանճ յայտարարութիւնը . — Հին իրաւունկներն ե արտօնութիւնները պիտի պահուին . Սուլդանը հին կարգերը նորէն հաստատելէն վերջը՝ Կիբա իշխանին հրաման կու այս որ երկրին կառավարութիւններէն ձեռք առնու :

Լը-Ռուս Սէնդ Առնոյ մարածախարը նախորդնեաց գիշեր Գաղղիական զօրաց հրամանատարութիւնը Գանդրուպէր զօրավարին յանձննելէն վերջը , Պէլակէն չոգենուուը կը մտնէ Պոլիս գառնալու , բայց Ճամբան կը վախճանի հօ ապրուան :

30 . Պուլիշխանն առ Էսդէրհազի կոմս ի Պէլին . — Աւստրիա կը համարի որ իր և բոլոր Գերմանիոյ շահը վտանգի մէջ է . քանի որ Ռուսիա հաստատուն և տեսական խաղաղութեան մը հաստատուելուն ապահովութիւն մը շտար : Կայսերական գահինքը ամենեին իրաւունք մը չունի արգիլէլու որ Դանուբեան իշխանութիւնները գուրս սեպուին բոլորովին պատերազմական շարժմանց տեղիրէն . և կը կարծէ որ Բրուսիան ալ չկրնար հրամանակել որ Գերմանիոյ շահը ուրիշ կերպով ապահով չըլլար , բայց եթէ Աւստրիոյ այս գաւառները բոլորովին բռնելով : Ըստ կը

¹ Տես Համ . ՓԴ , երես 15 , 92 , 159 , 191 , 223 , 255 , 286 , 334 . Համ . ՓԴ , երես 11 , 82 , 129 , 162 , 227 , 275 :

յաւի կայսերական գահինը որ Պետքնի գահի.
Ճը նորէնոր դժուարութիւններ ու արգելուններ
կը հանէ, թէ իր յայտարարութեանը գէմ, որով
խոստացեր էր օգնելու Աւտորիոյ, և թէ այս վեր-
ջին Ռուսական յարձակմունք մը կրելու ըլլայ,
և թէ նաև ընդդէմ չորս պայմաններուն զորոնք
բարյապիս պաշտպանելու համար պարտաւորած
է ինքնիք: Աւտորիա Ֆրանքֆորդի ժողովքին ու-
րիշ առաջարկութիւններ պիտի չնէ, բայց եթէ
ինչ որ գաշնակցութեան գիրքը ինքիր գրից հետ
միաբանելու համար բնակիան հետևանք են, և կը
համարի որ չորս պայմաններուն գէմ հանուած
ընդդէմութիւնները չեն միաբանիր ամեննեին այն
խոստամանը որ այս չորս առաջարկութեանց բա-
րյական օդինականութիւնը տալու արուած է:
Այս պաշտօնագրին հետ կը խրկուի նաև հետա-
գայ մտերմական թուղթը. — Աւտորիոյ գահինը
հաստատուն միսքը գրած է որ իր առաջիկայ բռն-
ած գիրքէն չհնաւանայ: Ինքը չկրնար իշխանու-
թիւն առած սեպուիլ արդիւնը որ պատերազ-
մով զօրութիւնները իշխանութեանց մէջ ալիքենց
պատերազմական շարժմունքները չխորթեն, և ոչ
մէկ առթի մէջ չկրնար ետ կենալ իր բռնած գիր-
քէն ու զինեալ գիտողութեանէն՝ պատերազմին
մասնակից ըլլալու գրից մէջ մտնել:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. Պուլ կոմը առ իսգէրհազի կոմն խրկած
պաշտօնագրիը ու մտերմական թուղթը՝ կը խրկէ
նաև ամեն գերմանական տէրութեանց քով գրա-
նուած Աւստրիոյ գեւազաններուն, որպէս զի եր-
կուքն ալ իւրաքանչիւր տէրութեանց հազորդեն:

2. Աւստրիական զօրաց մաս մը մարդաշխափ տե-
ղակալ Բար կոմին հրամանատարութեանը տակ
Եաշ կը մտնեն:

3. Վալագիոյ հոսքուար Սդիրպէյ իշխանը Պու-
քրէշգ կը մտնէ:

8. Ռուսիոյ կայսեր մէկ պատուիրանագիրը հե-
տևակազօրաց Գ. Դ. ու Ե. բանակներուն գլուխ
և ընդհանրական զինակիր Կորչագով Բ. Իշխանը
կանուանէ գլուխ հարաւային բանակին, ու Գիէ-
վի, Բոլդաւայի և Խարբովի կառավարութեանց,
որոնք հոկտ. Են սկսեալ պաշարման վիճակի մէջ
մտած էն, ու նաև Բոտովայի, Վերսոնի, Վա-
թէրինոսլաւի ու Տաւրիոյ մինչև Բերեբով ու Պետ-
արարապիոյ գաւառին կառավար:

9. Դաշնակցաց զօրքը Սեւաստորովիի գիմաց կը
սկսին պաշարման մարտկոցները չինել:

Աւստրիոյ մարդաշխափ տեղակալ Գորոնինի կոմ-
սին թուղթը առ Մոլուակիոյ կառավարութեան
ժողովը, կիքա իշխանին տէսչութեանը նորէն հա-
տառուելուն վրայօք:

Ռուսիոյ կայսեր մէկ պատուիրանագիրը Մէնչ-
ժիով ծովակալը Խրիմի ու բոլոր այն գաւառին
մէջ գտնուած ծովային ու ցամաքային զօրաց ընդ-
հանուր հրամանատար կ'անուանէ:

13. Աւստրիոյ սեպա. Յոին տուած ծանուցա-
գրին Բրուսիոյ պատասխանը. — Գերմանական
գաշնակցութեան ու Բրուսիոյ պատույն համար

պատշաճ սեպուեցաւ որ ետ կեցուի, նորէնոր
թղթակցութիւններով, Գերմանիոյ տէրութեանց
որոշմանցը նոր ուժ մը տալէն: Աւստրիոյ կողմա-
նէ արուած մեկնութիւններովը արակոյս չմնար
որ գանութեան իշխանութեանց մէջ զինուորական
ձեռնարկութեանց նորէն սկսուիլ գերմանական
շահուցը բոլորովին հակառակ է, և հետևածար
Ասպրիլ գաշնագրայն Բ. յօդուածին դիպուածէն
գուրա կ'ելլցուի, որովհետեւ այն յօդուածը ու-
րիշ վախճան չունէր՝ բայց եթէ Աւստրիոյ առանց
ինքիր կողմանէ պատճառ տալու իր երկրին կրէ.
մեր արշաւանքի մը առթին վրայ էր. այնպիսի ար-
շաւանքի մը առթի ամեննեին վախ չկայ հիմա:
Բրուսիան Գանուարի ազատ նաւագնացութեան
ու պաշտպանութեան ինդրոցը մէջ համամիտ է
Աւստրիոյ ունեցած տեսութեանցը, և պատրաս-
է միաբանելու Աւստրիոյ հետ այս խնդրոյս վրայօք
գերմանական ժողովըն առաջարկութիւն մը ընե-
լու, բայց շատ պայմանաւոր կերպով մասնակից
կ'ըլլայ այն կարծեացը, որ հիմակուընէ գերմա-
նիան որոշ գործի մը ձեռք զարնէ այդ եւրոպա-
կան խնդրոյն մէջ: Պետքնի գահին ալ շատ կը
ցաւի այս երկու տէրութեանց մէջ եղած աարա-
ձայնութեց, որուն պատճառը ուրիշ բան չէ՝ բայց
եթէ Աւստրիոյ ինքիր կողմանէ, առանց Բրուսիոյ
և ուրիշ գերմանական տէրութեանց հետ խորչը.
գակցելու, այնպիսի որոշմունքներ ընելը ու այն
պիսի պարտաւորութիւններ վրան առնելը որոնց
հետևանքը յայտնի Աւստրիական կայսրութեանը
կը վերաբերի, և ոչ Բրուսիոյ ու մէկալ պետու-
թեանց: Խոկ Բրուսիա որոշած է իր կողմանէ հա-
ւատարիմ մնալու գաշնակցութեանցը և գլխաւո-
րապէս գաշնագրայն Բ. յօդուածին:

14. Տրուէն աղ Լիւիի շրջաբերականը գերմա-
նական արգունեաց քով եղած Գաղղիական գէս.
պանացը. — Գերմանիան գեռ ևս Աւստրիոյ ու
Բրուսիոյ մէջ որոշմունք մը ընելու վրայ է. վասն
զի գերմանական գաշնակցութիւնը չէզոք կարծեց
կենալ ընդհանուր շահու մը խնդրոյն մէջ. ու ան-
հոգացաւ որոշ գիրք մը առնելով կռնակ կենալու
արեւատեան տէրութեանց, երբոր ասոնք գեռ կը
յօւսային որ պատերազմի ձեռք չզարնէն: Դաշ-
նակցութեան վանդապաւոր տարաձայնութեանէ մը
խալքուու մէկ հատիկ միջոցն է՝ սեպտ. Յին
Աւստրիոյ Բրուսիան դահճճին ապրիլ 20ին ե-
ղած գաշնագրութեան վրայօք առւած ծանու-
ցագրոյն խմաստն ընդունիլ: Յայտնելոր Աւստրիոյ
Մոլուակիա ու Վալագիա մտնելը ապրիլ 20ին ե-
ղած գաշնագրոյն Բ. յօդուածին տակը կ'ինկնայ.
և օգոստոսի 8ին արուած ծանուցագրին մէջ գլո-
ւուած խալքութեան գաշնագրութեան մը հիմ
յայսանի և որոշ ընդունուելիլ գերմանիոյ երկրոր-
դական Տէրութեանց կողմանէ զօրաւոր ազգեցու-
թեան մը ձեռք զարնուած կը սեպուի. ուր ընդ-
հակառակն գերմանիան Աւստրիոյ առաջարկու-
թեանցը մերժումն առաջովը՝ ինքը մինակ զատուած
կը մնայ:

կը շարունակուի: